«ՓՅՈՒՆԻԿԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

ՀԱՐԳԵԼԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ձեր պարբերականի 1991 թ. № 2-ում զետեղված է լեզվաբան Ռ. Իշխանյանի նամակը ուղղված երիտասարդ արևելագետ Գ. Ասատրյանին և ապա այդ առիթով «Մասնագետ, դիլետանտ» խորագիրը կրող «մի փոքրիկ նյութ», ուր, իբր, վերարտադրված է իմ և Իշխանյանի միջև տարիներ առաջ տեղի ունեցած երկու զրույց (խոսակցություն)։ Լեզվաբանը փորձում է հավատացնել ընթերցողին, որ 1971 թ. ես իրեն ասել եմ, թե պատմաբան Ս. Երեմյանը «համաշխարհային ճանաչում ունեցող գիտնական է», իսկ դրանից 14 տարի հետո նույն գիտնականին, իբր, համարել եմ «դիլետանտ»։ Բացահայտ կեղծիք, ինչպես ասում են, պոչավոր սուտ։ Ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ. Երեմյանի մասին ես երբեք չեմ խոսել Իշխանյանի հետ։ Ամենայն վճռականությամբ հայտնում եմ նաև, որ Երեմյանի հասցեին ես երբեք և ոչ մի տեղ թույլ չեմ տվել, և չէի կարող թույլ տալ գործածել «դիլետանտ» բառը, քանի որ ես նրան միշտ համարել եմ բարձրորակ մասնագետ և անվանի պատմաբան։ Այսպիսով, նամակին կցված հավելվածը, որին լեզվաբանը անվանում է «մի փոքրիկ նյութ», շարամիտ հորինվածք է։ Ահա ևս մի օրինակ այն մասին, թե ինչպես կարելի է խոսել բարոյական նորմերի մասին, բայց միաժամանակ, եթե պետք է, գռեհկորեն ոտնահարել դրանք։

Ինչո՞վ բացատրել Իշխանյանի այս վարքը։ Բանն այն է, որ իմ խմբագրությամբ լույս տեսնող «Պատմա-բանասիրական հանդեսում» տպագրվել են մի շարք պատմաբան գիտնականների հոդվածներ, որոնցում ցույց են տրվել Ռ. Իշխանյանի, մեղմ ասած, ոչ բանիմացությունը պատմության հարցերում։ Ի վիճակի չլինելով վարել գիտական բանավեճ, լեզվաբանը ճրգնում է վարկաբեկել «Հանդեսը», նրա խմբագրին և սիրողական, մակերեսային դիրքերից անպարկեշտ հարձակումներ գործել իրեն քննադատող մասնագետների վրա։ Ի դեպ նշենք, որ սա պատահական երևույթ չէ Իշխանյանի համար։ Հայտնի է, որ լեզվաբանը մեր մասսայական, ոչ գիտական մամուլում տպագրում է ահռելի քանակությամբ հոդվածներ (ինչպես և ունենում է բազմաթիվ ելույթներ հեռուստատեսությամբ ու ռադիոյով), որոնց մի զգալի մասում այլևայլ առիթներով փորձեր են արվում վարկաբեկել տասնյակ մտավորականների։ Անպատասխանատվությունը հասնում է այն աստիճանի, որ նա գրում և խոսում է «Հայաստանի գիտական մաֆիայի», հանրապետության «գիտության ակադեմիայի մաֆիական բարքերի» մասին, չբերելով ոչ մի փաստ, ոչ մի ապացույց։ Հասկանալի է, որ մեր մտավորականության շատ և շատ ներկայացուցիչների դեմ Իշխանյանի կողմից մղվող այդ «ծավալուն պայքարը» ոչ մի աղերս չունի ո՛չ գիտության զարգացման մասին մտահոգության և ո՛չ էլ մարդկային տարրական բարեխղճության հետ։

Ինչ վերաբերում է արևելագետ Գ. Ասատրյանին ուղղած Իշխանյանի նամակին, ապա ես այն համարում եմ խիստ ցածրորակ և ամոթալի։ Առանց ճանաչելու Ասատրյանին, ծանոթ չլինելով նրա աշխատություններին, նամակագիրը կասկածի տակ է առնում երիտասարդ արևելագետի գիտական բարեխղճությունը և ազնվությունը, վիրավորում է նրա արժանապատվությունը։ Լեզվաբանին զայրացրել է այն հանգամանքը, որ «Փյունիկի» նախորդ համարում տպագրած «Սիրողականությունը հասարակական գիտություններում» իր հոդվածում արևելագետը իրավացիորեն քննադատել է դի-

լետանտիզմը (սիրողականությունը), նշելով, որ իսկական գիտության զարգացումը կարող է ապահովել ոչ թե դիլետանտիզմը, այլ պրոֆեսիոնալիզմը։ Սա բացարձակ ճշմարտություն է, դրա դեմ ոչ ոք չի կարող առարկել։ Սակայն լեզվաբանը ունի հակառակ կարծիք, նա իր պաշտպանության տակ է վերցնում սիրողականությունը։ Ինչո՞ւ։ Ըստ երևույթին այն մտքով, որպեսզի արդարացնի հայ ժողովրդի պատմության հարցերում ցուցաբերած իր դիլետանտիզմը, որի մասին քանիցս նշվել է մեր պատմագիտության մեջ (տե՛ս, օրինակ, Գ. Սարգսյանի, ապա Գ. Տիրացյանի ու Գ. Արեշյանի հոդվածները «Պատմա-բանասիրական հանդեսում», 1990 թ., №№ 1, 3)։

Պրոֆեսոր Իշխանյանը խրատներ է տալիս արևելագետ Ասատրյանին։ Չգիտեմ վերջինս ինչպես կընդունի դրանք, բայց կարծում եմ վատ չի լինի. եթե Իշխանյանը հաշվի առնի Ասատրյանի հետևյալ խորհուրդը. «Յուրաքանչյուր ոք, մանավանդ մտավորականի հավակնություն ունեցող մարդ, պետք է հասկանա, որ ազգային սնապարծության պատվաստումը ժողովրդին, հատկապես հակագիտական և խախուտ կռվանների վրա, հայրենասիրություն չէ, բնավ։ Ազգային դաստիարակության կառույցը պետք է հենվի միայն ճշմարտության վրա, բացարձակ գիտական ճշմարտության։ Իսկական հայրենասիրությունը պետք է սնվի մաքուր և անաղարտ աղբյուրից։ Վերջիվերջո հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը այնքան հարուստ և ինքնաբավ են, որ մենք կարիք չունենք որևէ բան կեղծելու...»։

Ընդգծելով սիրողականության անպտուղ և վնասակար էությունը, Ասատրյանը իր հոդվածը վերջացնում է հետևյալ նախադասությամբ. «Ժամանակն է, որ ամեն մարդ դրաղվի իր գործով»։ Կարծում եմ, որ մեր «ամենագետ» ու «որդմափնշակ» հեղինակների համար սա ևս օգտակար խորհուրդ է։

Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
ՀԳԱ ակադեմիկոս